ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

11 օգոստոսի 2014 թվականի N 39-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳՈՐԻՍԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ – ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014թ. օգոստոսի 11-ի <<Գորիսի թիվ 1 հատուկ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության՝ օրենսդրության պահանջների համապատասխանության և ընտրված տնօրենի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին>> N 127-Ա որոշման, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1.2014թ. օգոստոսի 12-ից լուծել <<Գորիսի թիվ 1 հատուկ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Վլադիկ Շալունցի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Կոզմանով Կառլեն	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Բալայան Ինևա	Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ
Ծատրյան Արման	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ
Շալունց Հերմինե	<<Գորիսի թիվ 1 հատուկ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն (ընդունող)
Շալունց Վլադիկ	<<Գորիսի թիվ 1 հատուկ դպրոց>> ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար (հանձնող)

3. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

4.<< Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

<< ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2014թ. օգոստոսի 11
ք. Կապան